



ՀՈԳԵՇՆՈՐԸ Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՂԱ ՄԱՏԵՆՋՅԱՆ

Մնվել է Բարձր Հայքի Բարերդ քաղաքում 1892 թվականին: Մանուկ հասակից զբիղվել է հորից և մեծացել է մոր խնամքով:

Ավարտել է տեղական վեցամյա վարժարանը և համայնքի որոշումով և ծախսով ուղարկվել է սովորելու Արմաշի դպրեվանդում 1905 թվականին, Բորզոմ վարդապետ Գուշակյանի և Բարզեն վարդապետ Կյուլենսերյանի տեսչության օրենքին:

Ավարտելով դպրեվանքի դասընթացը 1908 թվականին, գիտելիքներով ճոխացրած իր միտքը, վերադառնում է իր ծննդավայրը, որտեղ պաշտոնավարում է որպես ուսուցիչ: Ապա որոշ ժամանակ առևտրական մի հաստատությունում աշխատում է որպես հաշվապահ:

1914 թվականին մեկնում է Փարիզ, որտեղ և հետևում է Սորբոնի համալսարանի պատմա-փիլիսոփայական ամբիոնի դասերին որպես ազատ ունկնդիր. միաժամանակ



հաճախելով Պիժիկ դպրոցի առևտրատնտեսական դասավանդություններին:

Համաշխարհային առաջին պատերազմի պատճառով ընդհատում է ուսումը և ստիպվում է աշխատել դանադան հիմնարկներում որպես հաշվապահ:

1919 թվականին վերադառնում է Կոստանդնուպոլիս և ապա 1921-ին վերջնականապես հաստատվում է Բուխարեստում, որտեղ էլ հիմնում ու ղեկավարում է հաշվապահական-իրավաբանական մի դրասենյակ:

1955 թվականին ներդադրում է Հայաստան, և իր մեջ զգալով քահանայական

կոչում, Վեհափառ Հայրապետի հրամանով ձեռնադրվում է քահանա ձեռամբ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի ու նշանակվում Գեղարդի վանքի վանահայր:

1956 թվականի սեպտեմբերի 23-ին ստանում է արեղայական վեղար և մտնում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունից շարքերը:

